
ԱՐԾԳԻ ԲԱՆՉԻՆՅԱՆ, Հայերը համաշխարհային կինոյում, Ե., Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 2004, 688 էջ:

Հանրագիտարանային և կոթողային աննախադեպ այս աշխատությունը, կարելի է ասել, հեղինակի կյանքի գիրքն է, քանի որ նրա՝ 15 տարիների մանրակրկիտ, նպատակասլաց և հավաքված հարուստ փաստագրական տվյալների ճոխ և փայլուն արգասիքն է:

Գրականության և արվեստի թանգարանի հրատարակությամբ լույս տեսած այս ստվար հատորում ներկայացված են համաշխարհային կինոյին ընդհանուր առմամբ իրենց մասնակցությունը բերած գրեթե 50 երկրների շուրջ 2200 հայազգիների վերաբերյալ առավել հանգամանալից տեղեկություններ, կինոարտադրության այս կամ այն ոլորտի զարգացմանը նրանց բերած նպաստի, նրանց կինոգործունեության ու կենսագրության մասին պատմող հարուստ ու բացառիկ փաստեր, որոնք Արծվի Բախչինյանը քաղել է սփյուռքահայ և օտար ծովածավալ մամուլից, բազմալեզու մասնագիտական գրականությունից, առանձին երկրների ֆիլմագրություններից, կինոհանրագիտարաններից, բազմաթիվ ազգային տարեցույցներից, Գրականության և արվեստի թանգարանի, ինչպես նաև Հայաստանի ազգային արխիվային ֆոնդերից, անձնական նամակագրություններից, հանդիպումներից և այլն:

Ռուս երգիչ Իոսիֆ Կորգոնի՝ մի առիթով ասված խոսքը թե «Հայն աշխարհի միակ ժողովուրդն է, որը մինչև վերջ դիտում է կինոնկարը՝ մակագրերում հայկական ազգանուն փնտրելու համար» (Новое время, 4. III. 2004, էջ 13), առավել քան համապատասխանում է իրականությանը: Այդ մասին է վկայում նաև Ա. Բախչինյանի կողմից գրքի բացման խոսքում մեջբերված պոլսահայ մտավորական, գրող Ռոպեր Հատտեճյանի «Հուշատետրում» արտահայտված նրա հետևյալ միտքը. «Ինձի համար շարժանկարի մը վերջավորությունը շատ հետաքրքրական է միշտ: Երբ ժապավենը կվերջանա և կսկսին պաստառին վրա երևիլ ժապավենին պատրաստության այս կամ այն կերպով մասնակցություն բերողներու անունները, ամբողջ ուշադրությունս կսրեմ: Ուրիշներու համար ժապավենը այլևս վերջացած է: Շատեր ոտքի կ'ելլեն, այդ մասին չեն հետևիր իսկ: Բայց ես անսովոր համառությամբ մը կ'հետևիմ այդ անուններուն: Եւ համբերությունս անպայման կ'զտնե իր վարձատրությունը: Շատ հաճախ Հայու մը անունը, երբեմն ալ մեկե ավելի Հայու անուններ կ'տեսնեմ հոն»: («Նոր Մարմարա», Ստամբուլ, 13. 11. 1987, էջ 7): Ահա հենց այս հայերի մասին է Ա. Բախչինյանի սույն հատորը:

Ներածության մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է համաշխարհային կինոարդյունաբերության առանձնահատկությունները՝ նշելով, որ ի տարբերություն արվեստի մյուս բնագավառների, երբ «տարբեր հայ և հայազգի գործիչներ, ստեղծագործելով հանդերձ օտար միջավայրում, իրենց արվեստով հաճախ միաժամանակ պատկանում են նաև հայ մշակույթին ... կինոարվեստի բնագավառը մի փոքր այլ է, քանի որ տարբեր երկրների կինեմատոգրաֆին իրենց մասնակցությունը բերած հայերն իրենց ստեղծագործությամբ չեն առնչվում հայ կինոյին:

Նրանցից շատերը, որքան էլ կապ չունեն հայ արվեստի և իրականության հետ, այնուամենայնիվ, իրենց գոյությամբ մաս են կազմում հայ ժողովրդի՝ նրա գենոֆոնդի և որոշ չափով՝ նաև պատմության: ...Մինչդեռ հայ արվեստին նրանք կա՛մ բնավ չեն առնչվում, կա՛մ կարող են առնչվել որոշ վերապահումով...» (էջ 14):

Ա. Բախչինյանը, առանձին գլխով ներկայացնելով «Հայ կինոյի նախապատմությունը» գաղթօջախներում (աշխարհում հայկական առաջին՝ 5 մասից բաղկացած հայոց պատմության և մշակույթի թեմաներով շարժապատկերը նկարահանվել է 1912 թ. Եգիպտոսում՝ «Յիշատակարան» խորագրով հայագիտական թողարկումների հեղինակ և հրատարակիչ, գրավաճառ եգիպտահայ Վահան Զարդարյանի կողմից) և Հայաստանում (1924 թ. Երևանում նկարահանվել է Հայկինոյի «Խորհրդային Հայաստան» հայկական առաջին շարժանկարը), միաժամանակ կարևորում է «ոչ ազգային միջավայրում գործած, օտար քուրաներին կրակ տված» և իրենց ծնած ժողովրդի ազգային մշակույթի հետ կապ չունեցող հայրենակիցներին հայտնաբերելը, ուսումնասիրելն ու ներկայացնելը, մանավանդ որ այլ ժողովուրդներ (ռուսներ, հրեաներ և այլք) արդեն իսկ ունեն համաշխարհային կինոյում իրենց ազգի ներկայացուցիչների նպաստը լուսաբանող հրատարակություններ (էջ 20):

Ըստ ամերիկյան „*Time*” շաբաթաթերթի՝ 1997 թ. համակարգչային հարցախույզի, 149 հազար ձայնով «Դարի արվեստագետ» ճանաչված երգիչ-երգահան, դերասան, մեծանուն հայորդի Շարլ Ազնավուրը, որին ժամանակի ֆրանսիական մամուլը բնութագրել է «Ֆրանսիան ազնավուրացված է...» խոսքերով, հետևյալ կերպ է արտահայտվել իր ազգային պատկանելության մասին. «Ես հարյուր տոկոսով հայ եմ և հարյուր տոկոսով ֆրանսիացի: Շատ կապված եմ իմ արմատներին, ամբողջականորեն հայ եմ իմ կենցաղով ու սովորույթներով և ամբողջականորեն ֆրանսիացի՝ իմ արվեստի մեջ: Ու երկվություն չկա այդ երկու հանգամանքների միջև» (էջ 373-374):

Ա. Բախչինյանի աշխատության հաջորդ բաժիններում համակարգված ներկայացվում են ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի, Արևելյան Եվրոպայի, Մերձավոր ու Միջին Արևելքի, ասիական այլ շրջանների ու Լատինական Ամերիկայի երկրների, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի կինոարդյունաբերությանն իրենց նպաստը բերած հայագիների վերաբերյալ հարուստ և հնարավորինս մանրամասն տեղեկություններ:

Հայկական ծագումով երևելի գործիչների մեծամասնությունն ապրում և աշխատում է ԱՄՆ-ում և Ֆրանսիայում, ուստի և ամենից ծավալունն այդ երկրների բաժիններն են: Հեղինակը հմուտ և մատչելի շարադրանքով ներկայացնում է առանձին-առանձին նրանցից առավել ակնառուների կյանքի և գործունեության պատմությունը (Ռուբեն Մամուլյան, Անրի Վերնոյ, Ակիմ Թամիրով, Մայք Քանըրզ, Արլին Ֆրենսիս, Աշո Շահխաթունի, Հյուգ դը Բագրատիդ, Ատոմ Եղոյան, Կարինե Թորոսյան, Արասի Բալաբանյան), անձնական մտորումներն ու ապրումներն ազգային միջավայրից դուրս: Դրանով իսկ ընդհանուր պատկերացում է տրվում

տվյալ երկրի հայ համայնքի կյանքի առանձին հարցերի մասին:

Յուրաքանչյուր երկրի ներքո խմբավորված ներկայացված են կինոարդյունաբերության գրեթե բոլոր ոլորտները ներառող հայազգիները:

Հատորն ունի նաև հետաքրքրաշարժ փաստերով հարուստ երեք բաժիններ: Առաջինում ներկայացված են «Հայանուն կինոգործիչները», այսինքն՝ նրանք, որոնք ունեցել են հայազգի ամուսիններ: Երկրորդում ներկայացված են «Հեռավոր և հավանական հայկական ծագում ունեցող դերասանները» (Էլենոփա Դուզե, Վիվյեն Լի, Փիթեր Ուստինով, Իզաբել Կարայան և այլք):

Երրորդ հավելված՝ «Հայապատում կինոնկարներ» բաժինը ներառում է՝ ա. Հայ և օտար կինոբեմադրիչների նկարահանած «Հայկական թեմայով կինոնկարներ», բ. «Հայապատում ֆիլմերի ծրագրեր», որտեղ նշված են նախատեսված, սակայն չնկարահանված ֆիլմերը, գ. «Հայ հերոսներով ֆիլմեր», դ. «Հայկական տարրերով ֆիլմեր», երբ հնչում կամ ցուցադրվում են հայոց պատմությանը, աշխարհագրությանը, մշակույթին, առանձին հայերին վերաբերող դրվագներ, ե. «Հայկական երաժշտությամբ ֆիլմեր»:

Գրքում միտումնավոր դուրս է թողնված Ռուսաստանի կինոյին հայազգի ներկայացուցիչների մասնակցության լուսաբանումը, ինչը պատճառաբանված է այն հանգամանքով, որ ԽՍՀՄ-ում հայ կինոն համընդհանուր խորհրդային կինոյի մաս է կազմել: «Հայաստանում և նրա սահմաններից դուրս բնակվող հայ ու հայազգի կինոգործիչների գործունեությունն այնքան գիրկընդխառն է եղել, որ միտք չունի առանձնացնել հայաստանցի կինոգործիչների գործունեությունը խորհրդային այլ հանրապետությունների կինոյում և կամ խորհրդային հայազգի կինոգործիչների գործունեությունը «Հայֆիլմում»», - նշում է հեղինակը (էջ 17-18):

Հատորն ունի լուսանկարների հարուստ ընտրանի, գիտական սկզբունքով կազմված կինոգործիչների անվանացանկ, անգլերեն ընդարձակ ամփոփում:

Ցանկալի կլիներ, որ օգտագործված աղբյուրների բաժնում ևս իր արտացոլումը գտներ առանձին բաժիններում հիշատակված հարուստ գրականությունը, որով ավելի ակնառու և մատչելի կդառնար հատորի ողջ աղբյուրագիտական հենքը: Պետք է ենթադրել, որ պարզ վրիպակ է հայ կինոգործիչների քանակով և որակով ԱՄՆ-ից հետո երկրորդ տեղը զբաղեցնող Ֆրանսիան անհամեմատ ավելի երիտասարդ հայազգի կինոգործիչներ ունեցող Կանադայից հետո ներկայացնելը, մանավանդ որ անգլերեն ամփոփման մեջ դրանք նշված են ճիշտ հաջորդականությամբ (էջ 679):

Աշխատությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Ա. Բախչինյանը ոչ միայն ընդլայնում է կինոաշխարհի մասին անհատական և ազգային մտափոփոխումը, այլև աշխարհին է ներկայացնում բազմակողմանի կարողություններով օժտված տաղանդավոր հայ մարդուն: Ահա թե ինչու կարևոր է այս աշխատության անգլերեն թարգմանելն ու հրատարակելը:

ԱՎԱԳՑԱՆ Ք. Ռ.

Պատմական գիտությունների թեկնածու